

## ԵԼԻՖ ՇԱՖԱՔԻ ԱՂՄԿԱՐԱՐՈՒՅՑ «ՍՏԱՄԲՈՒԼԻ ԲԻՆԸ» ՎԵՊԸ

Ն. Մ. ԻՍՎԱՆՎԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ  
ԳՊՀ դասախոս

«Դեպի ծշմարտություն տանում է սիրտը, այլ ոչ թե խելքը»:

Թող որ սիրտող մախաձեռնող լինի: Ո՞չ խելքը»:

Ելիֆ Շաֆաք: Այս անունը հայ հասարակությանը և ի մասնավորի հայ ընթերցողին ճանաչելի եղավ «Ստամբուլի բինը» (2006 թ.) վեպի թարգմանությունից հետո (2012 թ.): Ելիֆ Շաֆաքը պատկանում է ազատամիտ այն թուրք մտավորականների տեսակին, ովքեր անկարող եղան անտրոտունց լինել սեփական խիղճը կրծող ցավի առջև: Նա երիտասարդ թուրք արձակագիր է, ծնվել է Ստրասբուրգում (Ֆրանսիա) 1971 թ., ծնողների անուսնալուծությունից հետո մոր հետ վերադարձել է Անկարա: Գրում է անգերեն և թուրքերեն, հրապարակվում է եվրոպական մամուլում: «Ինչպես ճամփորդում եմ երկրների միջով, այնպես էլ ճամփորդում եմ լեզուների միջով և կախված ասելիքից՝ ընտրում եմ, թե որ լեզվով գրեմ», - ասում է Շաֆաքը<sup>1</sup>: Յավանաբար թուրքերենով չեր կարելի ասել այն, ինչ վաղուց հուզում էր երևակայությունը, և նա ընտրեց անգլերեն՝ դիմելով համայն մարդկությանը: Ներկայումս Շաֆաքը հանրաճանաչ գրող է Թուրքիայում, բազմաթիվ մրցանակների դափնեկիր, թեև նրա գրողական առաջընթացը անխոչընդոտ չի եղել:

Շաֆաքի «Ստամբուլի բինը» վեպը դարձավ աղմկահարուց ու քննարկելի վեպ. վեպում հիշատակվում է նաև հայերի ցեղասպանությունը: Քաջ հայտնի է, որ ցեղասպանությունը բարը թուրքերի հոգեբանական բարդույթն է: Յենց այդ բարի համար Ելիֆ Շաֆաքը երկու անգամ մեղադրվել է Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով՝ թուրքական ինքնությունը վիրավորելու համար, սակայն դատարանը նրան արդարացրել է՝ ապացույցների անբավարության պատճառով. Շաֆաքը հիմնավորեց, որ իրեն դատում են երևակայական, հորինված պատմության համար: Գիրքը դատապարտվեց, արգելվեց դրա հրապարակումը, գրողը ենթարկվեց բազում քննադատությունների, սակայն այս ամենը միայն նպաստեց գրքի հանրաճանչությանը: Այն տպագրվեց բազմաթիվ լեզուներով, հասանելի ու հետաքրքիր դարձավ հա-

<sup>1</sup> <http://www.grakanert.am>

սարակության լայն շերտերին: Վեպը գրվել է անգլերեն, այնուհետև հեղինակն այն թարգմանել է թուրքերեն:

Ուշագրավ է, որ ժամանակին երկու ժողովուրդների դարավոր համակեցությունը պատմության տեսանկյունից կարևորելով, հեղինակը որպես վեպի բնաբան է ընտրել հետևյալ տողերը. «Ժուկով ժամանակով Աստծու էակները ցորենի չափ շատ են լինում: Շատ խոսելը մեղք է լինում: Մի թուրքական և մի հայկական հեթիաքի նախարան...»<sup>2</sup>: Վեպը սկսվում է հերոսուհու՝ ազատամիտ և ըմբոստ Զելիհայի առօրյայի նկարագրությամբ: «Սկիզբը միանշանակ հիշեցնում է Օրիան Փամուկին ու ծյունը, որ ամընդհատ գալիս է Կարսում, ձյունը, որ ոչ մի նեպքում չի դադարում հերոսի՝ Կայի ճակատագրում: Ելիֆ Շաֆարի վեպում նույն կերպ գալիս է, բայց իրեն անձրև, նկատում է Անահիտ Աղամյանը,- Փամուկի «Զյունը» և Ելիֆ Շաֆարի «Ստամբուլի բիճը» նույն պատմությունն են պատմում՝ ժամանակակից թուրքիայի ու թուրքի: Երկուսի մեկնակետն էլ սերն է՝ ցավի հետ այնքան միախառնված, որ դժվար է տարբերակել: Սառն է Օրիան Փամուկը՝ կշռադատող, ողջախոհ ու համարյա անտարբեր, նա ճամփեզրին կանգնած պատմում է ժամապարհով անցնողների նախն: Շաֆարը պայթուցիկ է, նա երբեմ ճամփեզրին չի կարող լինել, նա ինքը ճանապարհն է: Եթե Փամուկը գերադասում է «պայթեցնել» ընթերցողին, ապա Շաֆարը ինքն է «պայթում»: Փամուկի վեպում հայը բացակա հերոս է, բայց հերոս է ավելի, քան նրա բոլոր ներկա ու գործող հերոսները: Նա գրում է հայերի բացակայության մասին այնքան պարզ ու արտահայտիչ, որ բացակա հայերը գործող անձ են դառնում ներկա թուրքերի կյանքում: Շաֆարն «ուղղում է այդ սխալը»: Նրա վեպում հայերը գործող անձիք են: Ելիֆ Շաֆարը իր սերնդի վեպն է գրել՝ նոր սերնդի մտածողության ու նոր սերնդի գործողության, սերունդ, որ չէր լինի, եթե չգար Օրիան Փամուկի «Զյունը»<sup>3</sup>:

Յեշտ չէ թուրք գրողի համար սեփական երկրի կողմից դավաճանի այտակ ստանալ ուրիշի ցավի մասին «բաց» խոսելու պատճառով: «Եթե գրում էի վեպը, գլորալ քաղաքական խնդիրներ չեն լուծում: Յենց հակառակը, ես ուսումնասիրել են հայ ու թուրք կանանց ամենօրյա կյանքի պարզ մանրութերը, դրանք շատ նման են իրար... Ստամբուլը մեծ գունավոր մատրյոչկայի է նման: Բացում ես այն և մեջը գտնում մեկ ուրիշ տիկնիկ: Այն հայելիների աշխարհ է, ոչինչ այդքան հանգիստ չէ, որքան թվում է: Այն կլիշեներ չի սիրում»,

<sup>2</sup> Ե. Շաֆար, «Ստամբուլի բիճը», Երևան, 2012:

<sup>3</sup> Անահիտ Աղամյան, «Այստեղ մտնելուց առաջ պետք է թողնես ատելությունդ», <http://www.grakanert.am/>

- ասել է Ելիֆ Շաֆաթը: Յետաքրքիր մտահղացմամբ նա բոլոր կանանց խնդիրներն ի մի է բերում՝ անվանելով դրանք «Ստամբուլցի կանանց ուղեցոյցի զգացմունքների կանոններ»<sup>4</sup>.

1. Ստամբուլցի կանանց ուղեցոյցի զգացմունքների ուկե կանոնը. «Եթե փողոցում հետևիցդ են ընկել, ուշադրություն մի՝ դարձրու, մի՝ պատասխանիր, զրոյցի մի՝ բռնվիր, որովհետեւ ոչ միայն հետապնդողին հայիող կինը, այլև ուշադրություն դարձնող կինն այդ մարդուն միայն ավելի է ոգևորում»:

2. Ստամբուլցի կանանց ուղեցոյցի զգացմունքների արժաքն կանոնը. «Եթե փողոցում թեզ հետևում են, մի՝ նյարդայնացիր, խուճապի մի՝ մատնվիր, որովհետև հետապնդումից նյարդայնացող և չափից շատ ուշադրություն դարձնող կինը միայն իր գործն է քարդացնում»:

3. Ստամբուլցի կանանց ուղեցոյցի զգացմունքների բրոնզե կանոնը. «Եթե փողոցում թեզ հետևել են, ամենալավը շուտափույթ մոռանալն է, չիիշելը, որովհետեւ միջադեպը միայն նյարդեր է քայլայելու»:

Շաֆաթի ստեղծագործություններում տեսնում ես թուրք հասարակության, մարդու իրական խնդիրները: Յենց այդ խնդիրներն արժարժելիս նա մատնանշում է, որ այստեղ էլ երկու ժողովուրդների միջև գուգահերները շատ են:

Բացի Թուրքիան խորհրդանշող Մուստաֆայից, վեպի մյուս գլխավոր հերոսները կանայք են: Գրողի կարծիքով ժառանգության պահպանման գործում կանայք ամենամեծ դերն ունեն: Յերօսուիկիներ են, որ պայքարում են տղամարդու և կնոջ իրավահավասարության համար, խորհում են ավանդականի ու ժամանակակցի հակասությունների, ընտանիքում տղամարդու դերի մասին: Վեպում տեսնում ես մի կողմում ֆեմինիզմով տառապող կանանց կտրուկ ազատամտություն և իրենցն ապացուցելու անհաղթահարելի ցանկություն, թուրք կանայք, որոնք դեմ են իրենց երկու նահապետական բարբերին, ընտանեկան կարծրացած ավանդույթներին, որոնք սիրում են տատու անել, կարծ փեշ հագնել, Կաֆե Կունեքերայում բանավիճել, մյուս կողմում՝ կանայք, որոնք այդ ավանդույթների կրողն ու պահպանողն են: Խոհանոցային նմանություն-նույնությունն առավել աչքի զարնող է. ժամանակակից հայի և թուրքի համար ավանդական համարվող կերակրացանկը բավականին նման է: Ժամանակակից հայի և ժամանակակից թուրքի՝ վեպի երկու երիտասարդ հերօսուիկիների մտերմությունն ու միմյանց բացահայտումը հուսադրող է: Մարդիկ պատրաստ են միմյանց ձեռք մեկնելու, ընդունում են այն, ինչը փաս-

<sup>4</sup> «Ստամբուլի բիծը», էջ 10:

տարկված է: Թուրք հերոսուհին՝ 19-ամյա Ասյան, չի կարողանում հասկանալ, թե ինչու պետք է ինքը ներողություն խնդրի մի բանի համար, որի հետ բացահայտ ոչ մի կապ չունի: Բայց դրա պատասխանն էլ կա, Շաֆաքի հայ հերոսները ասում են. «Ձեր պետությունը ժխտում է պատմությունը: Եվ այդ պետությունն էլ դուք եք ստեղծում, նշանակում է՝ մեղսակից եք»<sup>5</sup>:

Յիշարժան է, որ հայ Արմանուշը ընթրիքի սեղանի շուրջ Ասյայի այն հարցին, թե ճի՞շտ է, որ **System of a down**-ը ատում է թուրքերին, փորձում է ներկայացնել հայերի ատելության պատճառը, իսկ թուրք կանայք, հետաքրքրությանը լսելով, ցավակցելով, հայերի հանդեպ իրագործված դաժանություններից վրդովվելով հանդերձ, չեն էլ պատկերացնում, թե այդ վայրագություններն իրականացնողների ու իրենց միջն թեկուզ հեռավոր ինչ-որ կապ գոյություն ունի: Ու դա պատահական չէ: Շաֆաքը բարձրացնում է մի ցավոտ խնդիր, այն է՝ հիշողության կորուստը. «Ահա մի տարբերություն ևս: Դու հեշտությանը կարողանում ես ասել՝ եկեք նորից սկսենք: Մենք չենք կարողանում: Դաժանությունը անցյալի հետ կապ չունի, իսկ ճնշվածությունը կարող է միայն անցյալից կախված լինել: Դու համար էլ դու ասում ես՝ եկե՛ք մոռանանք, իսկ մենք՝ եկե՛ք իհշենք»<sup>6</sup>:

Վեպի մասին խոսելով՝ հարցագրույցներից մեկում Շաֆաքն ասել է, որ Թուրքիան տառապում է հիշողության կորստով. «Ուզում եմ, որ թուրքերը կարողանան իշել, իսկ հայերը՝ մոռանալ»: Այս միտքը անընդհատ արձագանքում է վեպի էջերում, տարբեր արթիթերով, տարբեր կերպարների խոսքաշարում նորից ու նորից կրկնվում է այն հետևողությունը, թե «հայերն ու թուրքերը ապրում են տարբեր ժամանակային գոտիներում: Դայերի համար ժամանակը մի շրջան է. անցյալի՝ ներկայում նորից ծնվելու, ներկայի՝ ապագա ծնելու մի շրջան, իսկ թուրքերի համար ժամանակը շատ տեղերում բաժանված է, կտրտված գծի է նման, անցյալը մի կոնկրետ տեղում ավարտվում է, այժմ գրոյից է սկսվել: Թուրքերի անցյալի ու ներկայի միջն մասնատվածությունից բացի այլ բան չկա»<sup>7</sup>: Պատահական չէ, որ 19-ամյա թրուիի Ասյան, հանդիպելով Արմանուշին, զարմանում է իրեն հասակակից աղջկա գլխում մեծահասակի հուշերի առատություրունից: Մինչդեռ հայերի համար դա անցյալ չէ, ներկա է: Երկար ձգվող, երբեք չթուլացող հոգևոր ու ֆիզիկական, շոշափելի ցավ: Արմանուշ Զաքմաքչյանը երրորդ սերմոդի ներկայացուցիչն է, որի մեջ

<sup>5</sup> «Ստամբուլի բիճը», էջ 290-291:

<sup>6</sup> «Ստամբուլի բիճը», էջ 288-289:

<sup>7</sup> «Ստամբուլի բիճը», էջ 258:

վառ է հիշողությունը իր նախնիների հետ ամուր կապի շնորհիվ. «... Յեսո կամաց-կամաց հասկացավ, որ սպասում էր մերողության, բայց դա չէր նշանակում, որ նրանք մերը ընդունում էին: Թուրքերն են, որ այս ամենն արել են հայերի Ըկատմամբ 1915 թվականին: Ինքը հայ է, նրանք էլ, եթե թուրք են, արդյոք չափ՝ ոք է մերողություն խնդրեն: Սակայն կարծես ոչ ոք չէր ուզում իր վկա վերցմել պատասխանատվությունը: Խնդիրն այն չէր, որ ցավը չէին կիսում, ընդհակառակը՝ կիսում էին: Խնդիրն այն էր, որ իրենց ու անցյալում մեղք գործածների միջև ոչ մի կապ չկար: Շատ տարիներ անց, երբ Արմանուշը հիշի այս պահը, կիամոզվի, որ խնդիրը «ժամանակային հասկացության տարրերություն» է: Ինքը՝ որպես հայ աղջիկ, հավատում էր, որ իր սերնդից առաջ ապրած սերունդների՝ պապերի հոգիներն իր մեջ են ապրում: Մինչդեռ շարքային թուրքի և իր ծագման միջև տևականության նման զգացում չկար»<sup>8</sup>:

Յեղինակի համոզմամբ «ոչինչ այնքան չի մտերմացնում մարդկանց, որքան ընդհանուր թշնամին»: Օրինակ, մի անգամ «Անուշի ծառ»-ի քննարկման նյութ դարձավ Ենիշերիների հարցը: «Նրանք, ովքեր հավատում են Օսմանյան կառավարության արդարությանը, զգիտեն Ենիշերիների պարադոքսը: Ենիշերիները քրիստոնյաների երեխաներն էին, ովքեր սեփական ժողովրդին արհամարհելու և անցյալը մոռանալու գնով հասարական հասարակական աստիճանների գագաթին հասնելու նպատակով կրօնափխվել էին Օսմանյան պետության կողմից»<sup>9</sup>: Քաջություն է հարկավոր նման հայտարարություն անելու համար, այն էլ թուրք կին գրողին: Իր հարցագրույցներից մեկում էլիֆ Շաֆարն ասել է, թե գրականության մեջ կողմնակալություն չպետք է լինի, սա մի տարածք է, ուր մուտք գործելու համար անցագիր կամ անձնագիր պետք չէ: Իրական գրականությունը ջնջում է քաղաքական ու պատմական սահմանները: Իրական գրականության կենտրոնում հենց իրական մարդն է: Գրականությունը արժեք ունի, եթե անկեղծ է: Շաֆարի անկեղծությունը հուզում է, զարմացնում է հային այրպես լավ ճանաչելու կարողությամբ: Նրա վեպում հումորային մի թեստ կա՝ «Արյոյոր բավականաչափ հայ՝ յ եթ» վերնագրով: Յարցերն ընտրված են այնպիսի անվետագությամբ, որ ակամա մտածում են՝ գրողը հայ է կամ գոնե իրաշալի գիտի հայերին բնորոշ հատկանիշները: Օրինակ՝ հարցերի թվում այսպիսիք կամ. «Մինչև 6-7 տարեկանը արդյոք հայերեն այրութե՞ն է իր ստանում ծննդյան տոներին», «Զեր տանը, ավտոտնակում կամ

<sup>8</sup> «Ստամբուլի բիծը», էջ 156:

<sup>9</sup> «Ստամբուլի բիծը», էջ 132:

գրասենյակում Արարատի առնվազն մեկ նկար կա՞», «Դուդուկի ձայնը լսելիս ամբողջ մարմնով սարսու՞ն եք», «Զեր արծվաքիթը վիրահատե՞լ եք կամ պատրաստվո՞ն եք վիրահատել», «Պատահո՞ւն է, որ ձեր բարեկամներին ու-տելիք պարտադրելիս «կուշտ եմ» բարը չեք ընդունում»:

Սոցցանցերում հայ օգտատերերը հետաքրքիր կեղծանուններով են հան-դես գալիս՝ Լեդի Սիրամարգ, Յակաղավուրմա, իսկ տատիկի տունը գտնելու և իր արմատները պարզելու հույսով Ստամբուլ Եկած Արմանուշը՝ Մադամ Վտարված Յոզի, ի պատիվ Զապել Եսայանի, որը «1915 թ. Օսմանյան կառա-վարության աքսորած Սաքընջայի հայ մտավորականների ցուցակում միակ կին գրողն էր»<sup>10</sup>: «Անուշի ծառ»-ում հայերի ու թուրքերի միջև խոսակցության թեմաները «մինչ այժմ անցել էին թեժ վիրավորանքների ու նյարդային մենա-խոսությունների տեսքով: Սակայն այս անգամ կար բովանդակության ու ար-տահայտության կոնկրետ տարրերություն. Կռաջին անգամ թուրքի հետ գրուց էին անում: «Ասե՞ք տեսմեն, այսօր, մեր օրերի շարքային թուրքից ի՞նչ եք սպասում, Աստծո սիրուն... Զեր ցավը, ձեր վիշտը սփոփելու համար ի՞նչ կա-րող են անել»: «Պետությունը կարող է ներեղություն խնդրել, -ասաց դժբախտ տաճտիկինը»: Սպասումը առավել քան հստակ է: Միևնույն ժամանակ հերթա-կան քննարկման ընթացքում ամենակտրուկ արտահայտություններ անող պա-րուն Բաղդասարյանը, թվում է՝ հայի համար զարմանալի հետևողյուն է անում. «Սփյուռքի հայերի մեջ կան մարդիկ, ովքեր ընդիմարապես չեն ուզում, որ թուրքերն ընդունեն ցեղասպանությունը: Որովհետև եթե թուրքերն ընդունեն, կնշանակի, որ մեր ոտքի տակից գորզը քաշուն են, վերացնում են մեզ միավո-րող ամենաուժեղ, գուցե և միակ կապը: Նիշտ այնպես, ինչպես թուրքերն ու-նեն իրենց կատարած անիրավությունը ժխտելու սովորություն, այնպես էլ հա-յերը, կառչելով ոճրագործությունների հիշողություններից, իրենց «Ճնշված» ինքնությունից հաճույք ստանալու սովորություն ունեն: Եթե նայենք՝ երկու կողմն էլ պետք է փոխվեն: Երեկու կողմն էլ ունեն կաղապարված դոգմաներ, որոնցից անհապաղ պետք է հրաժարվեն»<sup>11</sup>: Յեղինակի նպատակն ակնհայտ է, նա ուզում է լսելի լինել, նա ուզում է, որ երկուստեք մարդիկ կարողանան հնար գտնել մեկը մեկի ցավը լսելու և հասկանալու:

Ամերիկյան TED հեռուստագրներության կազմակերպած հանդիպումնե-րից մեկի ժամանակ Շաֆաքը, խոսելով քաղաքականության և վիպագորության

<sup>10</sup> «Ստամբուլի բիծը», էջ 134:

<sup>11</sup> «Ստամբուլի բիծը», էջ 289:

մասին, շատ հետաքրքիր համեմատություն է անում շրջանի՝ որպես երկրաչափական մարմնի ու նրա՝ մարդու վրա ունեցած ազդեցության մասին: Նրա տատը կրրություն չստացած, ավանդապաշտ, նախապաշտումներով պարուրված մի ծեր կին էր, որի մոտ հաճախ էին գալիս մարդիկ. նա կարողանում էր հմայությամբ բուժել: Իհարկե, աղոթքի ուժը տեղ ուներ այդ հմայությունների մեջ, սակայն, օրինակ, գորտնուկների բուժման հանար նա դրանք շրջափակում էր թանաքով, թացատրելով, որ պետք է զգուշանալ շրջանի ուժից, այդպես գորտնուկն ինքն իրեն ուտելով կոչնչանա: Շաֆաքը պատմում է, որ տատից մի ուսանելի դաս է առել. եթե ուզում ես ոչնչացնել ինչ-որ բան՝ գորտնուկ, վնասվածք, մարդու հոգի, կարևոր չէ, այն հարկավոր է շրջափակել բարձր պատերով, և դա ինքն իրեն կչորանա: Այդպես էլ մենք, ապրում ենք հասարակական տարբերեր խավերում, դասերում, այդ դասերին հասուլ հայցըներով ու եթե չունենանք կապ մեզանից տարբեր մտածողություն ունեցող մարդկանց հետ, կչորանանք ինքներս մեզ շրջապատճ նախապաշտումներից: Այստեղ օգնության է գալիս պատմելու արվեստը: Եթի խոսում են քաղաքական գործիչները, նրանք միմյանց չեն լսում, բայց երբ գրողը վեպի միջոցով հարց է բարձրացնում, մարդիկ կարողում են, ու անտարբերության, թշնամանքի պատը ճար է տալիս: Իհարկե, գրականությունը չի կարող վերաբանել մարդկանց շրջափակման մեջ պահող բոլոր պատմնեցները, բայց նա կարող է անցքեր բաց անել այդ պատերի մեջ՝ խարիսխելով դրանց ամրությունը: Ու դուք կարող եք դիտել պատմեջի այն կողմում ապրող մարդկանց, նրանց բարքերը, սովորույթները, ու երբեմն հնարավոր է ծեզ դուք գա այն, ինչ տեսնում եք: Ճնարավոր է տեսնեք, որ ընդհանրությունները շատ պետի են, քան միմյանց բաժանող տարբերությունները, որոնք շատ դեպքերում արհեստածին են<sup>12</sup>:

Սարոյանական անհուն սիրո շունչն է զգացվում անգլիագիր այս թրուի հու խոսքում. «Կարող ես ճանաչել Աստծուն բոլորի և ամեն ինչի միջոցով, ամբողջ տիեզերքում: Քանի որ Աստված չի սահմանափակվում եկեղեցիներում, մզկիթներում, սինագոգում: Բայց եթե ուզում եք ինանալ, թե որտեղ է նրա բնակավայրը, փնտրելու մեկ տարբերակ ունեք՝ նրանց սրտերում, ովքեր անկեղծ սիրել գիտեն: Ուղեղն ու սերը տարբեր խմորներից են հունցված: Ուղեղը կապում է մարդկանց և չի ենթարկվում ոչ մի վտանգի՝ այն ժամանակ, եթե սերը քանդում է բոլոր հանգույցները և դեպի վտանգը մետում բոլորին: Ուղեղը միշտ զգույշ է և խորհուրդ է տալիս. «Զգուշացեք չափազանց մեծ ոգևորութ-

<sup>12</sup> [http://www.ted.com/talks/elif\\_shafak\\_the\\_politics\\_of\\_fiction?embed=true&language=ru](http://www.ted.com/talks/elif_shafak_the_politics_of_fiction?embed=true&language=ru)

յունից»՝ այն ժամանակ, երբ սերն ասում է. «Օ՛հ, Ե՛կ ու մի՛ վախեցիր»: Միտքը հեշտ չէ կոտրել, միևնույն ժամանակ սերը մեկ ակնթարթում կարող է վերածվել թեկորմերի: Սակայն զանձերը թաքնված են հենց ավերակներում: Մեկ կոտրված սիրտը թաքնում է քաղում գանձեր: Դեպի ճշմարտություն տանում է սիրտը, այլ ոչ թե խելքը: Թող որ սիրտ նախաձեռնոլ լինի: Ո՛չ խելքը: Առերես հանդիպիր քո ինքնազմահատականի հետ, հառնիր ընդդեմ նրա և ի վերջո հաղթիր նրան: Երբ գտնես քո Ես-ը, կգտնես նաև Աստծուն»<sup>13</sup>:

Տարօրինակ մի գուգաղիպությամբ վերջերս «Paper Boats of Poetry» կայքը տարածեց Serkan Engin ամունով ևս մեկ թուրք գրողի խստովանությունը՝ «Անասելի ամոր է թուրք լինելո» վերնագրով: Ներողության խնդրելով իր նախնիների ոճրագործությունների համար՝ նա գրում է. «Որպես թուրք ժողովոյի զավակ, ես ճանաչում եմ իայոց ցեղասպանությունը և ներողություն եմ խնդրում մորս կողմից նախնիներիս կատարած ոճրագործությունների համար: Դա թուրք և քուրդ ժողովուրդների պատմության ամենաամոթալի էջն է: Ողջ մարդկության անունից ես խոնարհվում եմ ձեր զոհերի հիշատակի ու ձեր վշտի առաջ: Այս խոսքերիս համար ինձ կդատապարտեն, կրանտարկեն, անգամ կարող են զնդակահարել փողոցում, սակայն ես այլևս չեմ կարող գոցել խոհիս բերանը»<sup>14</sup>: Յրանտ Դիմքի, Օրհան Փանուկի, Էլիֆ Շաֆարի ցանած սերմերը ծիլ են տալիս, որոնք, հուսանք, ամրապնդվելով՝ ճեղքեր կբացեն հիշողության ու կարծրատիպերի պատմեշում՝ օգնելով, որ հասարակ մարդիկ դատապարտեն ու արգելեն ցեղասպանություն երևույթը:

### *Բանալի բառեր - թուրք, Ալոամրուլ*

## **“СТАМБУЛЬСКИЙ ПОДКИДЫШ” ЭЛИФА ШАФАКА**

**Н. М. ИСКАНДАРЯН**

*Кандидат филологических наук, доцент, преподаватель ГГУ*

В романе Элифа Шафак “Стамбульский подкидыш” армяне представлены в положительном свете.

Из-за этого произведения автор в 2006 году предстала перед судом: она обвинялась в оскорблении турецкой нации в соответствии с 301 статьей. Шафак и сегодня одна из самых читаемых писательниц. Есть люди, которые

<sup>13</sup> «Ալոամրուլի բիճը», էջ 295:

<sup>14</sup> [http://www.panarmenian.net/rus/news/176942/?fb\\_action\\_ids=622749717798950&fb\\_action\\_types=og.likes](http://www.panarmenian.net/rus/news/176942/?fb_action_ids=622749717798950&fb_action_types=og.likes)

считают, что затрагивание турецким прозаиком темы Геноцида преследовало цель приобрести скандальный имидж и добиться мирового признания. С другой стороны удивляешься тому, как писательница турецкого происхождения смогла понять народ, которого ее деды не переносили не только на физическом, но и на генетическом уровне. Действительно, нужно иметь мужество, чтобы заявить вслух о внутренних проблемах турецкого общества, а также подчеркнуть, что тема Геноцида армян – это психологический комплекс турка. Роман “Стамбульский подкидыш” написан сочным языком, с тонким юмором, местами – с самоиронией.

### THE BASTARD OF ISTANBUL: ELIF SHAFAK

N. M. ISKANDARYAN

*Candidate of Philology, Associated Professor, GSU lecturer*

In her second novel written in English, Turkish novelist Shafak tackles Turkish national identity and the Armenian "question" in her signature style. In a novel that overflows with a kitchen sink's worth of zany characters, women are front and center: Asya Kazanci, an angst-ridden 19-year-old Istanbulite is the bastard of the title; her beautiful, rebellious mother, Zeliha (who intended to have an abortion), has raised Asya among three generations of complicated and colorful female relations (including religious clairvoyant Auntie Banu and bar-brawl widow, Auntie Cevriye). The Kazanci men either die young or take a permanent hike like Mustafa, Zeliha's beloved brother who immigrated to America years ago. Mustafa's Armenian-American stepdaughter, Armanoush, who grew up on her family's stories of the 1915 genocide, shows up in Istanbul looking for her roots and for vindication from her new Turkish family. The Kazanci women lament Armanoush's family's suffering, but have no sense of Turkish responsibility for it; Asya's boho cohorts insist there was no genocide at all. As the debate escalates, Mustafa arrives in Istanbul, and a long-hidden secret connecting the histories of the two families is revealed. Shafak was charged with "public denigration of Turkishness" when the novel was published in Turkey (the charges were later dropped). She incorporates a political taboo into an entertaining and insightful ensemble novel, one that posits the universality of family, culture and coincidence.